

ԳՅՈՒՄՐԻ

Հակոբ Անանիկյանին

Պըտի մնամ ես գյուներեցի,
 Երգե հետս, Չորի բողազ,
 Երգե հետս, ֆայտոնչու ձի,
 Օր կնուտի տակ չդողաս:
 Հե՛յ ֆռնչիք, հետս երգեք,
 Ընպես երգեք, օր քեֆս գա,
 Գյուներին չկա, տեղը վերք է,
 Ծո, վո՞վ պըտի վրեն սգա:

Դալլաքներդ դարձան պոետ,
 Դոխբազներդ՝ պրոֆեսոր,
 Գյուների՝ քաղաք, քարերուդ հետ
 Թող մենակ ես խոսիմ էսօր:
 Իմ Արթեն պապ, հետս երգե՛
 Էն աշխարհքեն թող ձենդ գա,
 Գյուներին չկա, տեղը վերք է,
 Ծո, վո՞վ պըտի վրեն սգա:

Խելոներուդ մահն էր հանաք,
 Խնդըցրին ու գնացին,
 Ղասաքներդ կերթան մենակ
 Սև քարերուդ հոգեհացին:
 Թե մարդ եք դուք, հետս երգեք,
 Ջլեք զուռնեն, օր քեֆս գա,
 Գյուներին չկա, տեղը վերք է,
 Ծո, վո՞վ պըտի վրեն սգա:

Հին գյուներեցիք, թե չեք երգե,
 Էն աշխարհքեն չեք կրնա գա,
 Գյուներին չկա, տեղը մենք ենք,
 Ծո, երգից վեր՝ հեչ բան չկա:

ԲԱԼԼԱԴ ԱՂԱՎՆԻ ԽԱՂԱՑՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոչ մարգարե, ոչ անառակ-
 Կիսաճամփիս եմ մոտենում,
 Ոչ աստված եմ դառնում արագ,
 Ոչ էլ կարգին մարդ եմ մնում:
 Փորձած հազար ճակատագիր,
 Ո՞ւր եմ հասել՝ ինձ մի՛ սաս,
 Թռչուններով լեցուն երկինք,
 Ուր լոկ կյանքս ես չտեսա:

Կյանքս երկինք նետեցի ես,
 Որ քո կյանքին հրապուրի,
 Եվ մի արու աղավնու պես
 Խաբի ու իմ տունը բերի,
 Բայց նայեցիր դու աղավնուս

Ու ճչացիր՝ իմ կյանքն է սա,
Ես ցած բերի ցասում ու հույս,
Ուր լոկ կյանքս ես չտեսա:

Ես հարբեցի սողունի հետ,
Երբ թռչուններն ինձ լքեցին,
Սերս դարձավ կորած մի նետ,
Յարու դարձավ հրեղեն ձին,
Ես նայեցի մեռնող ձիուն
Ու գրեցի՝ իմ կյանքն է սա,
Բայց իմ բառերը դարձան ձյուն,
Ուր լոկ կյանքս ես չտեսա:

ՈՒՂԵՐՁ

Թե աղավնուս տեսնեք նորից,
Ու թե ճչաք՝ իմ կյանքն է սա,
Կհեռանաք էս աշխարհից,
Ուր լոկ կյանքս ես չտեսա:

ՋԱՐԿԵՐԱԿՆԵՐ

ԳԱԶԵԼ-ԽԱՂ ՑԱԿԻ ՈՒ ՍԻՐՈ ՅԵՏ (ժողովրդական)

Կյանքիս հավքը ձեռես թռավ - էրեխու պես խաղ կենեմ ես,
Ես մինուճար սիրտս հազար դարդ ու ցավի մաղ կենեմ ես,
Ես ցավերի ակեն բխած դեպի սիրո ծովը կերթամ
Ու թե երգս դպնի քարին, քարաստանը բաղ կենեմ ես:

Ծիծեռնակի խնած պուտըն ջրի նման կյանքս անցավ,
Ու ծովափնյա ավազների գրի նման կյանքս անցավ,
Ու թողնելով իմ մատների վրա՝ գույն-գույն ալրափոշի,
Թիթեռների իրիկնային պարի նման կյանքս անցավ:

Ու էլ հիմի կթվա ինձ, թե մեկ ուրիշ կյանքում եմ ես,
Ուր աչքերս բաց են ընդմիշտ և ուր ընդմիշտ անքուն եմ ես,
Ու ամեն մի գոյի սրտում տրոփելով համատարած
Հսկայական մի զանգի մեջ հավերժորեն զնգում եմ ես:

Տոտիկ էնող էրեխի պես ուրիշ կյանքում խա՛ղ կենեմ ես,
Մեղրս ծորում է անուշիկ - հազար ու մի ծաղկեն եմ ես,
Ես ցավերի ակեն բխած դեպի սիրո ծովը կերթամ,
Թե հարցնեն՝ ուրդի՞ց եկա, ըսեք՝ Գյուևրի քաղքե՛ն եմ ես: